թիւն։ Եւ ուն պատասխանի, ոչ դրամ ունիմք և ոչ հրաման 'ի Ծերունեաց, պատրաստ եմք 'ի բանտ և 'ի մահ, ողջ լիցի Թագաւորն. զի ազգն Հայոց ոչ երբէք լքանէ զդատաստան իւր վասն երկուց ոմանց լքելոց. միթէ լռէ՞ Տէրութիւնն առ այս։ Եւ ապա միջնորդութեամբ Հրէին գնացին առ Քեահեայն ներումն խնդրել և տալ միջոց ժամանակի գրել յԵրուսաղէմ և սպասել պատասխանի։ Եւ նա ասէ՝ արք երեւելիք և պատգամաւոր եկեալ էք աստ 'ի կողմանէ վանաց, որպէս մեք՝ և Ծերունիքն իսկ գրեալ էին։ Նոքա ասեն՝ յուսացեալ նոցա յԱստուած և 'ի ձեզ գրեցին և առաքեցին զմեզ վասն գործոյ Ծննդեան և Աստուածածնի, և զխոստացեալ դրամն մուրհակաւ հատուցանել 'ի պայմանեալ ժամանակին։ Ասէ՝ ահա առաջի ձեր է ճանապարհ Երուսաղէմի, որպէս եկիք, այնպէս գնացէք. գիտեմ զեղանակն առնլոյ զդրամն, և թերեւս աւելի. ելէ՛ք ելէ՛ք աստի։ Նոքա ասեն եթէ սիրով չարձակես զմեզ, ո՞րպէս կարեմք ելանել, և բաց 'ի քէն առ ո՞վ երթիցուք։ Եւ ելեալ նոցա արտաքս մինչ խորհէին առանձին, կոչեաց Քեահեայն զՍարգիս վարդապետ միայն 'ի ներքս և հարցանէր զԴիոնէսիոս վարդապետէ, թէ ո՞վ իցէ այրն՝ այնքան համարձակ և ճարտար 'ի բանս իւր. և նա ասէ մին 'ի բազմամեայ վաստակաւորաց Հարց Աթոռոյն, և ամս 4 վաստակեալ ընդ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս 'ի դատին Ցունաց, հմուտ ամենայն եղելոց իրաց. ասէ՝ աստ չգտանի ինչ ճարտարութիւն բանից։ Այս եղեւ 'ի մատնութենէ Ցունաց, զի 'ի վաղուց անտի ոխացեալ էին ընդ նմա և կամէին արկանել զնա 'ի վտանգ, այլ նոցա զանց արարեալ զնովաւ գնացին առ Ոստիկանն եւ պատմեցին նմա որ ինչ եղեւն. և նա ասէ՝ բազում ինչ խօսեցայ ընդ Բդեշխին, այլ այժմ 'ի ծանրութենէ տկարութեանս ոչ կարեմ պատմել, յորժամ եկեսջիք 'ի վաղիւ՝ պատմեցից, մեկնեցան 'ի վանս։

Եւ 'ի գիշերին յայնմիկ ծածկապէս իմացան զպատրաստիլ գրոցն Ցունաց և 'ի վաղիւն տալ նոցա 'ի ձեռն Քարտուղարի Հրէի, որոյ առանձին գրեալ էր փոխանորդն Լատինաց յԵրուսաղէմէ գիտել զգործս Ցունաց։ Եւ ընդ առաւօտն ամենայն գնացին առ Ոստիկանն, և նա ա-